



Վ. ԱՐԻՉ-ԽԱՐԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 16

— Շ Շ Ա Ր Ա Ր Թ —

15 ԱՊՐԻԼ 1906

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ

Տարեկան 50 Ղրշ.

Վեցամսեայ 25 »

ԳԱՌԱՌԱՑ ՀԱՄԱՐ

Տարեկան 54 Ղրշ.

Վեցամսեայ 27 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ

Տարեկան 42 Ֆր.

Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

Մ Շ Շ Վ Ա Ժ Ա Ո Ա Տ Ո Ր Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ՁԵՆԻԹՐ՝ քի՛ Կ. Պոլիս, Է. քի՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ՁԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հատը 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԻՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Տ. ԱՎԱԴՐԻԱՅ) شرکت مرآتیه مطبعه سی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառասկսի Թիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ շփոթութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. աոյն մեքենան ամենէն կատարեւ լագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց յէջ:

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ

- | | |
|--------|--|
| ԲՆՐԱ | (1. Մեծ փողոց, Պօս Մարչէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ԱԼԻՍԱՐ | 2արդ Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու թոյր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅԾ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԵՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԵՆՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Իրամագրութիւն եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԿ

ՀՐԴԵՅԻ ՃԻՒՂ

Իրամագրութիւն եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԿ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կեանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգեւորի եւ առագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատուհի է ՔՐԷՏԻ ԼԻՍՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեքանաք խան, թիւ 11-16:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Երկաթագոյնի

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 16

ԵԱԲԱԹ

15 ԱՊՐԻԼ 1906

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԷՉ

Ս. Զատիկի վարժապետական շնորհաւորութեան առթիւ, զոր սահմանած է Ս. Պատրիարք Հայրը, մեր վարժապետներուն ներկայ և ապագայ կացութեան վրայ դարձեալ բաներ մը խօսուեցան։ Աշակերտներ և աշակերտութեան զգայաւն շեշտելով ճառեր կարդացին, շնորհակալութիւն յայտնելով իրաւամբ Ն. Սրբազնութեան, որ տարին քանի քանի անգամներ կը պատուէ զիրենք իր այցելութեամբ անուշելով իրենց բերաններն ալ։

Այս առթիւ վարժապետներուն համար ըսուեցաւ թէ՛ անոնք մեր դատարակութեան հիմերն են. — Արգեօք։ Բայց պէտք է որ դո՛ւ ըլլան իրենց նիւթական վիճակէն, և իրենց միտքարութիւնը սա՛ ըլլայ գլխաւորաբար որ ծնունդ կուտան մշակութային մեծ և նշանաւոր մարդոց։ Ասիկա կըրնայ սակայն իրենց փորը կշտացնել։

Ըսուեցաւ թէ շատ վարժապետներ վարժապետ կ'ըլլան կարճ ժամանակի մը համար, և առաջին նպաստաւոր առիթով մը կը ձգեն գործերնին։ Իրաւ է թէ շատ է այսպիսի վարժապետներուն թիւը։ Չենք կարծեր։ Աւելի վարժուհիները այսպէս կ'ըլլան. անոնք իրենց ուսուցչութեան չըլանին մէջ սանկ նանկ լաւ քառքի մը ձեռք ձգելէ վերջը՝ ընդհանրապէս կը հրաժարին դպրոցէն, գործունէութեան ուրիշ դաշտ մշակելու համար։ Եւ յետոյ, ուսուցիչներուն նիւթական վարձատրութեան ներկայ պայմաններուն մէջ, կարելի է հանգարտ խղճով պարտաւորել զանոնք որ մնան դպրոցին մէջ, և առ ոտն կոխեն նիւթական ո եւ է նպաստաւոր վիճակ, որ ժամանակի ընթացքին մէջ կրնայ ներկայանալ իրենց առջև։ Հիշեցուն մէջ ալ կային և կան շատ մը վարժապետներ, եկեղեցական և աշխարհա-

կան, որոնք ուսուցչութիւնը իրենց զբաղումներուն վերջնական իտէալը ներկատելու չափ տուալ չեն երթար կամ չէին երթար, և առաջին նպաստաւոր առիթին կը սպասէին կամ կը սպասեն ակնդէտ ուսուցչութեան տաժանելի ասպարէզը լքանելու համար: Այնպէս չէ՞: Ներկայ ուսուցիչները միթէ ապրելու համար հացէ տարբեր նիւթով մը, զոր օրինակ, օդով, կրնա՞ն կերակրուիլ, անոնք իբրեւ մարդ իրենց ընտանիքին և զաւակներուն ապագան խորհելու կամբը և ազատութիւնը պիտի չունենա՞ն: Ասանկ արամաբանութիւն կ'ըլլա՞յ: Ո՞ր վարժարանին ելմտացոյցը այսօր կանոնաւորապէս կրնայ վճարել իր ուսուցիչներուն քանի մը հարիւր զոյ ամսականը: Աղէկ է որ այս վիճակին մէջ վարժապետները ընդհակառակն մտածեն չուկայի կամ արհեստի գործ մը բանիլ, որովհետեւ դժգոհութեամբ վարած պաշտօնին ձեռքէ՞ք օգտակար չի կրնար ըլլալ աշակերտներուն: Այնպէս չէ՞:

Ըսուեցաւ թէ կրթասիրութիւնը շատ յառաջացած է մեր համայնքին մէջ: Բարեկրթիւնն ալ արդեօք խօսուած ճառերուն մէջ այս մասին բան մը չըսուեցաւ:

Բայց ասկէց տուալ առթիւ մը ըսուած էր թէ մեր վարժապետներէն շատերը փոխանակ սիրտ մաշեցնելու կօշիկ կը մաշեցնեն: Եթէ իրօք մեր վարժապետները սիրտ մաշեցնելու տեղ կօշիկ կը մաշեցնեն, լաւ է որ սիրտ մաշեցնողներու տեղ կօշիկ մաշեցնողները ձգեն ասպարէզը անոնց՝ որոնք կօշիկ մաշեցնելու տեղ սիրտ կը մաշեցնեն, և սիրտ մաշեցնելու տեղ կօշիկ մաշեցնող վարժապետները յորդորելու է որ արժանաւորներուն տան իրենց

գործը, փոխանակ յորդորելու սիրտ մաշեցնելու տեղ կօշիկ մաշեցնողները որ չարունակեն կօշիկ մաշեցնել սիրտ մաշեցնելու տեղ:

Ջատկական շնորհաւորութեանց առթիւ մեր եկեղեցասիրութեան գովեստը կարգացուեցաւ, և վարժապետական շնորհաւորութեան առթիւ ալ մասնաւորապէս մեր կրթասիրութեան գովեստը հռչակուեցաւ: Եկեղեցասիրութիւն և կրթասիրութիւն ամէնէն էական պէտքերն են, և ուրախ ենք որ ասոնք զահացուած են առաւելով հանգերէ:

Ըսուեցաւ նաեւ թէ մեր թաղային դպրոցները քիչ կուգան կրթութեան ծարաւներուն համար: Արդեօք Այս ըսուածները մտիկ ընող քանի մը տեսուչներ յորդորեցին մեզի թէ Տօլապ Տէրէէ դուրս չենք կարծեր որ նոր դպրոցի պէտքը զգալի եղած ըլլայ: Սկիւտարի Ս. Խաչ դպրոցը տակաւին 100ի չափ աշակերտ կրնայ բովանդակել, Գատը-գիւղի դպրոցն ալ նոյնքան մը, Բերա ալ տակաւին 30 հոգիի չափ տեղ կրնայ ունենալ, նմանապէս կէտիկ-Փաշա և Մայր վարժարան: Ասոնցմէ դուրս միւս թաղերու վարժարաններն ա'լ աւելի տեղ ունին կրթութեան ծարաւներուն պապակը յագեցնելու համար: Սկիւտարի Ս. Խաչի 250 աշակերտներէն 100էն աւելի ձրիավար չեն, Գատը-գիւղ ալ կէս առ կէս, Եւ Ջատկի առթիւ 100 ձրիի հաղուստ և կօշիկ շինուեցաւ Սկիւտարի մէջ, Գատը-գիւղի մէջ ալ 60էն աւելի: Սկիւտարի և Գատը-գիւղի մէջ վարժապետները փետրուարի ամսակաւնով կերան իրենց Պասեկը:

Բայց տարակոյս չկայ թէ կրթասիրութիւնը հսկայաքայլ կը յառաջդիմէ, ինչպէս ըսուեցաւ: S.

ԱՂԱԳԱՆ ՍԸ ՅՈՐԾԱՑՍՏՐԷՆ

Աւագ Հինգարթիի եռաձայն պատարա-
գին համար տող մը բան գրել աւելորդ կը
համարիմ, թէեւ Հանրագիտակի ընթերցող-
ներուն խոստացած էի իմ վերջին յօդուա-
ծովս, նախ վասն զի բոլոր օրաթերթերը բա-
ներ մը գրեցին եւ երկրորդ, գրելու արժա-
նի բան մը չկար, բացի անսովոր բազմութենէ
մը: Ժխոր եւ մարմնուք: Հազիւ յաջողեցայ
դուրս նետուիլ եկեղեցիին մեծ դռնէն եւ
ոչ թէ տաճարի դռանէն, ուր մտնելու կամ
ելնելու համար կամ Մանգումէի արածնատի
քոջ ուժը ունենալու է մարդ եւ կամ Ժիրայր
Շիրակացիի դիւրածութիւնը: Դրանք առ-
ջեւ հանդիպեցայ վաղինակին: Անդրէաս-
եան եւ Մալխաս գրական վէճի մասին իմ
կարծիքս հարցուց, խոստացայ պատեհ առ-
թիւ կարծիքս հրապարակել: Ըսաւ նաեւ թէ
քիչ մը առաջ եկեղեցիին մէջն էր, ուր տե-
սած էր գրեթէ բոլոր խմբագիրները:

Ձատկին առաջին օրը Սկիւտար անցայ,
առաջին այցելութիւնս տուի Պէրպէրեան
էֆէնտիի շնորհալի աղջկան օրհորդ Մաննիկ
Պէրպէրեանի, որ դասընկերուհիս եղած էր
Հոմաքուլի մէջ, Շատոնց ի վեր կը փափաքէի
տեսնել զինքը, որուն հանդէպ մասնաւոր
յարգանք ու համակրանք կը տածէի, վասն
զի, ինչ մէջքս պահեմ, պատուական հօրը
հանճարին ցոլացումը կը տեսնէի օրիորդին
գրաւիչ աչքերուն մէջ:

Օրիորդը զիս տեսնելուն պէս առաջնոր-
դեց Պէրպէրեան էֆէնտիի աշխատութեան
մասնասենեակը, վասն զի նոյն միջոցին Պէր-
պէրեան էֆէնտի ընդունելութեան որակը
կը գտնուէր, ուր շնորհաւորութեան համար
այցելութեան եկողները կ'ընդունէր:

Յանկարծ Պէրպէրեան էֆէնտիի գոռ-
ձայնը լսելի եղաւ, օրիորդը ցնցուեցաւ,
հայրս բարկութեամբ կը խօսի ըսաւ, ո՞վ է
որ հօրս բարկութեան տեղի կուտայ, Բնա-
կանաբար մեր երկուքին ալ ուշադրութիւնը
դէպ ի ընդունելութեան սենեակը դարձաւ:
Թէոդիկն էր որ եկած էր պատանիի մը հետ,
ուրիշ չեմ գիտեր որո՞նք ալ կը գտնուէին
հոն: Խնդիրը Հանրագիտակին վրայ կը դառ-

նար. ուշադրութիւնս կրկնապատկեցի: Թէ-
ոդիկը կը ջանար համոզել Պէրպէրեան է-
ֆէնտիին թէ Հանրագիտակի մէջ մէկ քանի
չարախներ առաջ «Վարժապետին տրտունջը»
վերնագրով գրութիւնը ակնարկութիւն մըն
էր Պէրպէրեան էֆէնտիի: Այսքան միամ-
տութիւն չէի յուսար թէ ողիկէն: Մտածե-
ցէք անգամ մը, ո եւ է գրութեան համար
Պէրպէրեան էֆէնտիի պէս գրական հեղի-
նակութիւն ունեցող անձնաւորութիւն մը
համոզելու ելնել, ինքն իսկ համոզուած ըլ-
լալով որ պարզ բանասարկութեան մը դերը
կը կատարէր, վասն զի Հանրագիտակի խմ-
բագիրն Պէրպէրեան էֆէնտիի հանդէպ ու-
նեցած պաշտումը ամէն մարդէ աւելի՝ ինք,
Թէոդիկ, գիտէր: Ի՞նչ եղաւ վախճանը գի-
տէ՞ք, Պէրպէրեան էֆէնտի, կարկեց լե-
զուն, եւ խեղճ Թէոդիկ ամօթահար դուրս
նետուեցաւ: Հիւրերը մեկնած էին, օրիոր-
դը զիս առաջնորդեց Պէրպէրեան էֆ. ի քով:
Երկու տարի կար յորմէ հետէ պատիւ
ունեցած չէի տեսնելու մեծ Ուսուցչապետը,
իրացայ անոր երիտասարդական վառվռուն
խօսակցութեանը վրայ: Չէի կշտանար մտիկ
ընել:

Արդարեւ ինծի համար, Թէլեան Բարթող եւ
Պէրպէրեան Ռէթէոս էֆէնտիներու խօսակ-
ցութեան ներկայ գտնուիլ ու մտիկ ընելը
ամէնէն հաճելի բանն է աշխարհի վրայ, եւ
վստահ եմ թէ այսպէս պիտի մտածեն ամէն
անոնք որ գրական ճաշակի տէր եւ պերճա-
խօսութեան սիրահար են: ԷԼԻՋ ՀԱՃԵԱՆ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գոհութեամբ կը ծանուցանենք որ վեհա-
փառ Կայսրը գնահատելով երկաթեղինաց
առաջնակարգ վաճառական Ազնուաշուք Յա-
կոբ էֆէնտիի էստեանի բարեւոք ծառայու-
թիւնները, այս անգամ բարեհաճած է Սա-
նիյէի աստիճան շնորհել տնոր:

Էստեան էֆէնտի իրրեւ Ղալաթիոյ Ազգ.
Կեդրոնական վարժարանի Խնամակալութեան
Ատենապետ եւ հրապարակի վրայ առաջնա-
կարգ վաճառական՝ մեծ համակրութիւն կը
գրաւէ եւ Կայսերական այս բարեհաճ գնա-
հատումը խնդութեամբ կը լեցնէ իր բազ-
մաթիւ բարեկամները:

«Հանրագիտակ» ի խմբագրութիւնն ալ
այս առթիւ կը փութայ իր շնորհաւորու-
թիւնները յայտնել Ազնուաշուք Յակոբ էֆ.
Էստեանի, եւ շնորհիւ նորին Կայսերական
վեհափառութեան՝ ալ աւելի բարձրացում
կը մտաթէ:

ԳԻՏԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Ձեռք սեղմելու սովորությունը

Իրրեւ բարեկամական բարեւ, ձեռք սեղմելու սովորութիւնը հին ասպետներու օրերէն մնացած է: Անոնց համար ձեռքի սեղմումը փոխադարձ պաշտպանութեան, հաւատարմութեան եւ անձնութեան խոստում կը նշանակէր:

Ձեռքի միացումը իր նշանակութիւնը պահած է մինչեւ այսօր եկեղեցւոյ մէջ, ամուսնութեան նուիրագործութեան առթիւ:

Ասպետները խորանին առջեւ կենալով, նախ իրենց թուրին երախակալէն կը բռնէին, որմէ յետոյ տեղի կ'ունենար ձեռք սեղմելու պաշտօնական ձեւակերպութիւնը: Իսկ փողոցին մէջ կամ տունէն դուրս, մարդիկ, որ դասակարգի ալ պատկանէին, միշտ ճակատին բանալով զիրար կը բարեւէին, բացի ասպետներէն, որոնց միայն տրուած էր ձեռք սեղմելով բարեւելու առանձնաշնորհը:

Այն ատենէն ի վեր ձեռք սեղմելու սովորութիւնը կորսնցուցած է իր ասպետական հանգամանքը, եւ հետզհետէ ժողովրդոց մէջ ընդհանրանալով, այսօր քաղաքավարութեան ամենատարրական պահանջներէն մին եղած է:

Մեկու մը կենաց խմել

Մէկու մը կենաց խմել կը նշանակէ ներկայ կամ բացակայ անձնաւորութեան մը առողջութեան, յաջողութեան եւ բարօրութեան համար բարեմաղթութիւններ ընել, օգտուելով բարեկամներու կամ ազգականներու ծնունդի, անունի եւլն. տարեդարձէն, կամ այնպիսի կարեւոր պարագաներէ, որոնք ուղղակի առնչութիւն ունին մեր սէրը կամ համակրանքը գրաւող այն կամ այն անհատին հետ:

Կենաց խմելու սովորութիւնը վաղեմի ժամանակներէ ի վեր ծանօթ էր: Մեր նախահայրերը խնձոյքի ատեն սեղանակիցներուն կենաց բաժակ կը պարպէին իւրաքանչիւր կոչնական պարտաւոր էր իր գաւաթը

օրուան հերոսին հետ փոխանակել, այնչափ անգամ որ այս վերջինին անունը կը բաղկանար գրեթէ:

Այդ առթիւ իրարու երջանիկ տարիներու անվերջանալի շարք մը կը մաղթէին, որ ուղիղ կը համեմատեւ պարպուած գաւաթներու թուին հետ:

Կեղտերը՝ յոյներու եւ հռոմէացիներուն պէս, ճաշի ատեն իրարու կենաց կը խմէին: Այդ սովորութիւնը ծագում առած էր ընտանի չափաւորաց ի պատիւ սրտուած կերուխումներէն: Անոնք ննջեցեալներու յիշատակին համար ալ կը խմէին:

Հին ատեն Անգլիոյ մէջ՝ ճաշի վերջաւորութեան ատեն բաժակ կառաջարկուէր, եւ բաժակաճառ արտասանողը այդ առթիւ իր գաւաթին մէջ խորոված հացի կտոր մը կը դնէր ու այդ գաւաթը սեղանին վրայ ձեռքէ ձեռք շրջան ընելէ եւ իւրաքանչիւր ոք իր շրթունքը հեղուկին թեթեւապէս դպցունելէ յետոյ, առջինին կը տրուէր, որ իր կարգին կը խմէր գինին եւ կ'ուտէր խորոված հացը:

Այս սովորութենէն ծագում առած է անգլիերէն toast բառը, որ խորովել կը նշանակէ եւ ֆրանսերէն rattr բառին կը համապատասխանէ:

Ծափահարությունը

Ծափահարութեան ծագումը հին հուսկական թատրոններու մէջ փնտռելու է:

Պիւռիսի եւ Սէնեկայի հրամանով, 5,000 ծափահարող վարձկաններ բերուեցան, որոնք ձեռքի աղմուկով օղը կը թնդացնէին: Ծափահարութիւնը միայն թատրոններու մէջ գոյութիւն չունէր, այլ Կապիտոլի եւ ուրիշ մեհեաններու մէջ:

Տօրաթ բանաստեղծը թատրոնին մէջ իր կտորները բարձր պահելու համար, ծափահարողներու խումբ մը կազմակերպած էր:

Ետքերը այս սովորութիւնը խիստ ընդհանրացաւ, եւ մինչեւ այսօր կը շարունակուի առանց ընդհատման:

Ուսնոցը

Ուսնոցի ծագումի մասին զանազան կարծիքներ յայտնուած են, որոնք սակայն ի-

րարմէ նուազ վաւերական հանգամանք ունին:

Հետեւեալ միջադէպը ամէնէն աւելի հաւանական ըլլալու առաւելութիւնը ունի:

Սպանիացի զօրավար՝ Ալպայի դուքսը, Ֆլամանի բանակի զինուորներուն վարմունքէն դժգոհելով, որոշեց կախաղանի հանել անոնք որ զինուորական կանոնագրին կամ ռազմական օրէնքներուն դէմ մեղանշելու կը յանդգնէին, առանց նկատի առնելու զինուորականին աստիճանը կամ մեծութիւնը:

Ֆլամանցի զինուորները յայտարարեցին թէ այդ որոշումին իրականացումը աւելի դիւրացնելու համար, այսուհետեւ իրենց ուսերուն վրայ գամի եւ չուանի կտոր մը պիտի կրէին, արդարեւ ըրին այդ բանը, սակայն այդ օրէն ի վեր այնպիսի անըստգիւտ վարմունք մը ունեցան, որ չուանը՝ բանուած ժապաւէնի հիւսքի փոխուեցաւ:

Այժմ միջադէպէն ի վեր ուսնոցը իբրեւ պատուոյ նշան՝ ընտրեալ զինուորներու, սպաներու, եւ մանկկաւիկներու կը տրուի:

ՀՐԱԶԵԱՅ ՏԵՐՈՍԿԻ

ՊԱՑ ՄԷՔԹՈՒՊ

Քեօշէի պախաշին տակը նստող
բասխանսնի բուրժանսա կրոնջս:

Ճիշդիմ քուրուկս Թուրքանտա:

Անցած չարթու՝ Անրագիտակ, զազէ-
թասին մէջը կարդացի քիմ, մէրին Օգոս-
նիկին համար Պէնկի թալիթային աղջիկը
պիտի առնէս տէի, աս օր չիմացայ, տամ-
չաներու պիտի կայի հէմէն, տէրախապ
ճարվորեցայ էթէկս վրաս քաշեցի, ծեզի
կալու համար ճամբայ կեղայի կոր, մէյ
մալ նայիս տուռը չալվեցաւ, տէր պապան
տուն օրթենքի էկաւ, էտեւէն ալ Նուռու-
Փարենք զատիկի շնորավորի վիզիթայի է-
կան, վէլհասըլ չեղաւ քիմ կամ, անոր հա-
մար աս քանի մը սաթըր մէթուպովս ծեզի
իմաց կուտամ քիմ ատ ըլլալիք պան չէ,
չըլլայ քիմ խարար մը տաք, զէրէ ատ Պէնկի
թալիթա ըստած մաթանը ծերին կիտցած
մաթաններէն չէ, առաջուրնէ անուշ կերե-

ւայ ամա, էտեւ կէրէք զապալը ճահլիկը,
զիրա ասանկ միւզէվիթները առաջ պաշխա-
սիին կլոխը կերեն, էտքէն իրէնցը: Հիմա
նախ ընեմ քուրուկս տէ նայէ ինչ պիչիմ
մարդ է:

Էրկան Պոյու չէ, օրթա պոյու չէ, կարճ
պոյու է ամա, ամէն տարմ նետելուն՝ մէկ
ատըմին կերկնայ մէկալատըմին կը կարճը-
նայ, անոր համար պոյը պէլի չըլլար:

Վախիթ մը աղջիկը մօտիստրաութիւն
կընէր կոր ամա՝ քիթը պէրսնը կը տառ-
ցունէ կոր տէյի կընիկները էրէսը պիլէ չէին
նայի կոր տէի, մինակ էրէք իշին կը չինէ
կոր եղեր, անցած օր էրկան պոյու մէկուն
բանթօլնին չափը առած վախիթը մարդուն
պաճախին առան մնացեր է, հէմ ալ չընած
բանթօլնին մէկ բաշան էրկան մէկալ բաշան
կէս առչըն կարճ չընէր է, անկից ալ Փիտանի
պէս մարդուն թօփալ էս ըսեր է աս թէրգիի
վայելիք խօրաթայէ, պաճախը քաշեր է տէ լե-
զուն քիչ մը օլսուն չը քաշեր կոր էտէպիլի
չունը, մէյ մըն ալ էլէր մարը օրթան ցըքեր
է քիմ, անոր ասոր աղջիկ թէքիթ ընէ
տէի, անցած նոր մէկուն ալ թէքիթ ըրեր
է նէ, ան ալ ըսեր է քիմ, քշելիք մալ ունի
նէ անոր բազարը կայ ըսեր է, վույ բերանը
պագնեմ, աղէկ ալ ըսեր է, քա ամա կը-
նաց էկաւ տէ Օգոսնիկս կըտաւ, մէյ մնալ
էլէր մօտտուրալիս քալիքաթուրա պիչիմովը
անոր ասոր մահանա կը կըտնայ, ինք ըսեմ
նէ, ճամբան քալած վախիթը ֆուրթունայի
պաշուած կէմիի կըլմանի տէ բիթիւն փորին
մէջ պաղըռսախները ծռած էն, անցած նոր
ալ տուրուպ տուրտուղու եէրտէ քիսլարտան
մարդու մը էտեւէն լէզուին տուվեր է ամա,
մարդը քիպար ըլլալուն կապերովութիւն չէ
տուվեր, վէլհասըլ քուրիկս իշտէ հասկցուցի
ինչ չալիսէչանախ մէկը ըլլալը, անոր համար
չեմ ուզեր քիմ իմ մէկ հատիկ կրոչս զաւա-
կը Օգոսնիկը՝ էրի տէյի, աս մէքթուպս
անոր համար պաց կրեցի քիմ ամէն մարդ
կարդայ տէ ատ ալթը խարըլ մարդուն լա-
խըռտըին կապերովութիւն չիտան տէյի:

Սիրով կարօտով պարեւ կընեմ

Արկաքներս

Տըրսէվէի ցաւի պիլիիճ

ՕղիՏԱ ԶԱՆԶԱՆԵԱՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒ ԾԱՂԻԿԸ

Դաւիթ աղան վաճառականներուն ծաղիկն է: Քսան տարիէ ի վեր հրապարակին վրայ կը գործէ, եւ ինչ դիրքի մէջ որ էր գործի սկսած օրը, այսօր ալ ճիշտ նոյն դիրքին մէջն է, ոչ յառաջ գացած է եւ ոչ ալ ետ մնացած: Գուառներէն մասնաւոր խնամքով քանի մը (անշարժ) յաճախորդներ ապահովագրած է խանութը հաստատած ժամանակ եւ այս թուականէն ի վեր երբէք ջանադիր եղած չէ, ոչ նոր յաճախորդներ գտնել եւ ոչ ալ գործը ընդարձակել: Փափկաճաշակ չէ, առտուն քիչ մը պանիր հաց, իրիկուան պնակ մը կերակուր, ահա իր ծախսը մէկ մասը: Հագուստները պիթ բազարէն կը գնէ եւ քթախոտն ալ պագալ Պանճօէն, ինչ որ տարեկան հինգ տասը ոսկիի ահագին խնայողութիւն մը յառաջ կը բերէ իր պիւտճէին մէջ: Ընդհանրապէս առաւօտները կուգայ ապրանք առնելու եւ իւրաքանչիւր տեսակէն առնուազն 50 ծրար զատեցէ եւ սակարկութիւնը վերջացնելէ վերջ, այս ինչ տեսակը աչքին գէշ կ'երեւայ, այն ինչ տեսակը մութ, զեղչելով զեղչելով այնչափի կը հասցնէ որ 50 ծրարէն հազիւ տասը ծրար կ'առնէ: Շատ անգամ ալ իր գրասենեակը տանելէ վերջ երկու ծրարը ետ կը զրկէ՝ «այս թօփը աչքերուս զալպ կ'երեւայ կոր» ըսելով: «Սակարկութիւն չեմ սիրեր, մէկ խօսք կ'ուզեմ» կ'ըսէ եւ վերջնական գինը ըսելէ յետոյ, հարկերին քսան եւ հինգ կ'առաջարկէ:

Պատմայի թիւթներուն ամենեւին վրտահոսութիւն չունի եւ բոլոր առած ապրանքին եարտանները մէկիկ մէկիկ կը համրէ, եթէ պատահի որ կէս եարտաի պակաս մը գտնայ՝ աշխարհ իրար կ'անցնէ «ախպար աս ինչ խարդախութիւն է, բոլորը պակաս, աս ինչ եարտա է, կէսուակէս գողցուած, ես ինչ ընեմ եթէ առջի առածներս ալ այսպէս պակաս ելլեն», մինչդեռ անոնց բոլորն ալ արդէն մէկիկ մէկիկ համրած է:

Պարտամուրհակներ ստորագրած ատեն միշտ թուականը եօթ տասն օր վերջ կը դնէ, եւ գրիչը ձեռք առած ատեն երեսը խաչ կը հանէ եւ վաճառականներուն կը պնդէ որ

բարեմաղդութիւն ընեն այս թուղթը օրին վաճառելուն համար: Առանց խոնարհ ծառայի ստորագրութիւն չի դնել եւ եօթ տասը մարդու չկարդացուցած բնաւ չի վստահիր մուրհակին պարունակութեան ճշդութեանը: Եթէ պատահի որ իրիկուան դէմ հեռագիր մ'առնէ, ամենեւին չի բանար, վախճանալով որ մի գուցէ իր գործին անդորրութիւնը վրդովող լուր մը ըլլայ անոր պարունակութիւնը, այլ արշալոյսին մարդ մը կը գտնայ ու անոր կարդացնել կուտայ, որպէս զի հրապարակին վրայ չիմացուի իր գաղտնիքը: Բեռնակիրներէ բնաւ չ'ախորժիր եւ ոչ ալ անոնք իրմէ, որովհետեւ ամէն օր վէճ ունին իրարու հետ փոխադրողչէքի համար, եւ շատ անգամ ալ գանգոտ կ'ընէ վաճառականներուն թէ «քանի որ աս համալը հոս է, ձեր մաղազան ոտք կոխելիք չունիմ»:

Համակրանքով կը դրուատէ հին ապրանքներուն տոկունութիւնը եւ նորերուն բնաւ չի հաւնիր, եւ ամէն մտած տեղերը մանիֆաթութեայէն զգուշանալ կը քարոզէ, եւ եթէ իրեն 100 ծրար ապրանք ապսպրեն, հազիւ 25 ը կ'առնէ՝ գրելով յաճախորդներուն թէ «մանիֆաթութեայէն բռնուիլը աղէկ բան չէ» մինչդեռ իրեն հետ մի եւ նոյն ժամանակ գործ ընողներ, ահագին քանակութեամբ կ'առնեն ու կը ծախեն առանց «վտանգէն» վախնալու:

Բացի իր յաճախորդներէն, ուրիշ մարդու վրայ բնաւ վստահութիւն չունի, եւ եթէ պատահի որ մէկէ մը գանձեղիք դրամ ունենայ, մինչեւ ստակին առած վայրկեանը միշտ սիրտը կը դողայ թէ «արդեօք այս մարդը պիտի սնանկանայ», եթէ մէկու մը նկատմամբ տեղեկութիւն ուզուի իրմէ, կամ բնաւ պատասխան չի տար եւ կամ «մարդ կնկանմէն պիլէ չիւփհէ ընելու է» ըսելով կ'առնէ կը քալէ: Դրամարկզին մէջ ամենեւին պունքնօթ չի պահեր, եւ դրամ գանձած ժամանակ մէկիկ մէկիկ կը կշռէ, շատ անգամ ասով ալ չքաւականանալով, քովը կեցողներուն կը հարցնէ «կշառքը լըման է ամա չիւպհէ կընեմ կոր աս ոսկիէն, ինչ կ'ըսէք»: Բնաւ տեսնուած չէ Դաւիթ աղային Օսմ. ոսկի ծախսելը, այլ միշտ գաղղ-

եւ անգղիական ոսկի կը քէ՛ պարտականենք. րուն, եւ չի գիտցուիր թէ՛ ամէն օր ուսկից կը գտնայ այս օտար դրամները, պակաս դրամ երբէք չստանանք, բայց իր վճարած դրամներուն հարկւրին տասը անպատճառ պակաս կշիռ կ'ունենայ:

Վերջապէս ստուգիւ վաճառականներու ծաղիկն է Դաւիթ աղան, որովհետեւ ոչ ընթացքը կը փոխէ եւ ոչ ալ վաճառականներուն օժիթը թող կուտայ:

Իր այս սիրամաշուք ընթացքին պատճառով՝ ո՞ր վաճառատունէն որ ներս մտնելու ըլլայ, այնտեղի պաշտօնեաները հրաժարիմք ի սատանայէ: Ըսելով երեսներն կը խաշակնքեն եւ սրտերնուն ցաւէն կնքած են զինքը՝ «ծաղիկ», փողոցոսով:

• • •

Օր մը Դաւիթ աղան ըստ իր բարի սովորութեան՝ արշալոյսին արթնցաւ, եւ բժշկարանը կարգալէ ու աւուր պատշաճի աղօթքն ընելէն վերջ, սկսաւ տետրակները խառնել, շատ խառնեց, քիչ խառնեց, մէկ մ'ալ զլուխը վեր վերցուց որ կէս օր եղեր է, եւ մինչ կը պատրաստուէր պարտատէրներէն խոյս տալու համար դուրս նետուելու, յանկարծ երիտասարդ մը ներս մտաւ, զլուխը բաց եւ փեղոյրը ձեռքը:

— Ողջունեմ զձեզ:

— Օրհնեա՛ ի տէր:

Երիտասարդը Դաւիթ աղային պատասխանը երգիծանք մը կարծելով՝ իսկոյն աւրիւնը զխառն ցատքեց, որովհետեւ զեռնոր ելած էր սեղանին վարժարանէն եւ տարիէ մ'ի վեր գրագրութիւն կ'ընէր առեւտրական տան մը մէջ, բարկութեամբ եկած էր Դաւիթ աղայէն գանձելու 15 ոսկիի հրամանի մուրհակ մը, որուն համար առնուազն քսան անգամ զրկուած էր վաճառատան հաւաքիչը, եւ ձեռնունայն ետ դարցած: Աւելորդ է ըսել թէ գրագիրը հաստատապէս մտադրած էր ստակը չառած չերթալ, որուն համար ամէն տեսակ ճարտասանական ձեւեր պատրաստած էր արդէն ճամբան մտքին մէջ, եւ Դաւիթ աղային պատասխանէն աւելի եւս զայրացած, ոգեւորութեամբ մը յարեց:

— Այսօր Յուլիսի տանն է եւ Հրօտից քսան եւ հինգ ըստ տօմարայ . . .

— Տօն եւ յիշատակութիւն սրբոց անարծաթ բժշկ. . .

— Ատ ի՞նչ է, կատակերգութիւն պիտի խաղանք:

— Այսմաւուրքը չպիտի կարգայիր որ . . .

— Ձեզի պէս ազէտ անձինք, դուք որ վաճառականութեան տետրը կը համարուիք, պէտք էր որ ինքնին հեռացած ըլլայիք վաղուց առեւտրական հրապարակէն, եւ ոչ սակաւ զարմանք կազդէ ինձ թէ ձեր այդ գլխով ի՞նչպէս յաջողած էք մինչեւ ցարդ տոկալ առեւտրական արդի յառաջդիմութեան հոսանքին առջեւ, դուք որ ոչ առեւտրական օրէնք գիտէք եւ ոչ ճարտարագիտութիւն, ոչ Փիւնիկեցւոց վաճառականութիւնն ուսումնասիրած էք եւ ոչ եւրոպիոյ տարազագործութեան պատմութիւնը, այո՛ դուք ինքնաբոյս տատասկի մը նման պէտք էր որ հողմերէն ցարդ արմատախիլ եղած ըլլայիք: Վօլթէր ձեզիպէսներուն համար ըսած է իր խորհրդածութեանց մէջ թէ «պէտք է հեռացնել այնպիսիները հրապարակէն, որպէս զի ուրիշներն ալ չվարակուին իրենց ախտէն»:

— Գաւաթ մը ջուր տա՞մ, պօղազըդ չորցաւ:

— Ձեզի պէս պարտազանց մարդու մը պատիւը նախատինք կը համարիմ ինձ: Ուրիշ անձնաւորութիւններ կը քննադատուին ու ձեզիպէսներ կը փառաւորուին, աշխարհ պէտք է զայրանայ, սակայն շատ ալ սարօրինակ երեւոյթ մը չէ այս, լաղդին մէկ քմահաճոյքը, որ . . .

— Աֆէրիմ, շատ խնդաս, եօթը պօրտին լուս իջնայ սա բառերը քեզի սովորեցնողին հոգուն, է հիմայ քանի՞ ոսկի կ'ուզես:

— Ձե՛ս գիտեր միթէ, տասն երկու ոսկի:

— Ձէ՛, տասներկուքը շատ է:

— Ի՞նչ, միթէ զեղջե՞լ կ'առաջարկէք առանց ամչնալու, այն պարագային մէջ առեւտրական օրէնքը կը տրամադրէ որ գոցէք:

— Ձէ, զղջացող չկայ, ինչու գոցենք եւվրում, ան որ պարտականութիւն մը վերանիս առեր ենք նէ հէլպէթ պիտի կատա-

րենք, ուստի դիք եւ կատարեցէք, ըսեր է Դաւիթ մարգարէն, ամմա տասներկուքը չենք կրնար տալ:

— Ի՞նչ ըսել է չենք կրնար տալ, ստորագրութիւնը դրած ատեննիդ խորհելու էիք:

— Ստորագրութիւնը դրինք տէյի աշխարհք չանցաւ եւ, չատ պան ամմա տասներկու ոսկիով մեր գեղը ծախու կ'առնուի:

— Պէ՛ մարդ Աստուծոյ, կատակի՞ ելար, ձեր գեղը ի՞նչ վերաբերութիւն ունի այս խնդրոյն հետ:

— Ասըլ պէտք եղածը մեր գեղացին է, փարան գեղացին պիտի տայ:

— Ըսել է թէ հիմակ պիտի երթանք մէկիկ մէկիկ գեղացիները ինտոենք:

— Հապա՛. ամէնուն խօսքը մէկտեղ չգայ նէ չըլար, ես իմ գլխուս բան չեմ կրնար ընել:

— Ծաթելու բան, այս մարդը զիս պիտի խենթեցնէ պարզապէս, պէ ախպար, սա ստորագրութիւնը որո՞ւ է:

— Ծառայականիս է, լաքին կեցի՛ր կեցիր, աղէկ միտքս ինկաւ, տիրացութիւն կիտե՞ս, կրնա՞ս չապիկ հագնիլ, որ ելեր տասներկու ոսկի կ'ուզես կոր:

— Միթէ՛ ձեզմէ ստակ գանձելու համար անպատճառ չապիկ հագնելու է, այս ինչ անամօթութիւն է, չես ամչնար, ստորագրութիւնդ չե՞ս յարգեր:

— Կորսուիր սըկէց լիրբ, անամօթը դու ես, գլխուդ խռովի դուն ալ քուկ ընելիք վարժապետութիւնդ ալ, փոման եղանք դպրոց մը բանալու, ծօ՛ վաղը գեղն ալ երթաս նէ տղայքը ասանկ պիտի թէրպիյէ ընես: Մէյ մ'ալ կեցեր 12 ոսկի խաեալլամիլ կ'ընես:

— Խենթեցար պէ, ի՞նչ վարժապետ, ի՞նչ գեղ:

— Դուն կիրակոս աղային զրկելիք վարժապետը չե՞ս:

— Հա՛յ խըմպըլ, վարժապետը դուն ես:

— Հապա ինչո՞ւ աս խըտար ճառեր կարդացիր:

— Զըսի՞ որ խաւարը պէտք է տեղի տայ լոյսին, դեռ չիտկէ չիտակ խօսուածք մը չես հասկնար եւ վաճառականութիւն ընել կը յանդգնիս, մեղք այս հրապարակին:

— Ետքը ի՞նչ պիտի ըլլայ:

— Ստակները տո՛ւր որ երթամ:

— Ի՞նչ ստակ եա՛վրում, օղլում, ի՞նչ ստակ:

— Այն 12 լիրային փոխարէնը զոր պարտիս x վաճառատան, եւ որուն պայմանաժամը 15 օր անցած է, բան մը՝ որ պատուարեր չէ վաճառականի մը:

— Հա՛յ պէ՛վզէ՛կ, ծօ ասոր համար աս խըտար գլուխ ուռեցուցիր, գնա՛ գնա՛, ես մաղաղան կուգամ, չորպուճին կը տեսնամ, պիւթիւն տուած մալերնիդ չիւրիք ելեր է, ետ պիտի զրկեմ:

Այն օրունէ ի վեր Դաւիթ աղան հակարութիւն մը գոյացուցած է իւր մէջ՝ դպրոցականաց նկատմամբ, եւ որ երբ վաճառատունէ մը ապրանք գնէ նախ կը հարցընէ՝ «դահսիլտարնիդ դպրոցական չըլլայ հա՞»:

Տրագիզ

ՅՈՎՀ. Գ. ՊՕԶՄԱՆԱՆ

Զ Գ Լ Ք Ո Ք Ս

Աննըման չըքնաղ կոյս մեկ ժրպտով հր-
անագին,
Նայուածով մ'աչ աղու թովեցիր իմ հոգին,
Այնքորդ քու այդ խաժ երկնասուր մի պարգեւ
Փըչեցին սրտիկիս խոր գեփիւռ մը թերեւ:

Ուր կայծեր մոխրի սակ պահուած էին ի
վաղուց,
Արծարծեց քոց մ'անշեջ, ցոյփ, կրակ հոն
թողուց,
Եւ տուած հեզ մարմնոյս նոր ախիւն խօշական
Մոռցնելով ինձ խկոյն հին ցաւերս ան-
դարման:

Ու պահ մ'եսք ակամայ ես փայլերով դանդաղ
Հոն թողի քեզ մեկիկ, մեկիկ ու մըսագրաղ,
Քու վրայ ցածեցի ի՛նչ խոհեր, ես զուարթ.
Քեզ ձօնեց բաղձալով ծաղկեփունջ մ'համակ
վարդ:

Վայրիկ մ'եսք խորհեցայ թե վարդեր կը թոռմին
Հրացայց ցոյժերէն այդ անգուռ արեգին,
Ունիւմ ես սրտիս մեջ ծաղիկը հոստեհ
Սուրբ սիրոյ, այն քեզ զամ որ վայրես լառ
յաւե՛հ ...

ԱՐՇԱԿ Դ. ԻՍԳԵՉԵՐԱՆ

ՏՈՄԱՐԱԿԱՆ ՀԱՇԻՒ ՄԸ

ՊԵՏԱԿԱՆ ԶՈՒՄ

Այն նիւթ կամ խնդիր իր վրայ խօսուե-
լու օրն ու ժամանակը ունի, որոնցմէ մին
է՝ վերջացող տօնական օրերուն առթիւ ե-
կեղեցիներու մէջ պնակաշրջեցնելու ժամը,
որ իր պատճառով տաղտուկովն ու ծանծա-
րայթով, գրեթէ անտանելի ու անհանդու-
րելի բան մը եղած է, բան մը՝ որու մա-
սին շատ բան կը խօսուի, բայց բան մը ընել
կարելի չըլլար, ու երբ կարգը նորէն գա-
կրկին խօսք, դժգոհանք, ծանծայթ, բողբոջ,
խորհրդակցութիւն եւ անգործադրելի որո-
շումներ եւլն. եւլն., որոնք սակայն յետ
յարութեան ամէնքն ալ մէկտեղ յարութիւն
կառնեն, սակայն երբ այս մասին ամէն ոք՝

թէեւ պարապ տեղը, բայց վերջապէս, բան
մը ըսաւ կամ կ'ըսէ, ուրեմն ո՛ւր կը մնայ
իմ պօշպօղազորիւնս ու պարապ խօսքերու
հեթոճիութիւնս, երբ տակուին յամուրիմ,
ու չեղեմ՝ քանի մը բան ալ ես ըսեմ՝ ապ-
րանք քչեղու յարմար առիթը չփախցունելով,
այն ատեն՝ աւա՛ղ, եղո՛ւկ, տփսո՛ս ու վա՛յ
ինձ, բայց այս անգամ յարգելի ընթերցող-
ներուս կուզեմ ծանօթացնել նաեւ իմ հաշ-
ուագիտական տաղանդը, միանգամայն ռեֆ-
յանը ըրած ըլլալով իմ հիսապի մարդ մը
ըլլալու, որով կարելի կ'ըլլայ լիւրեւ օր մը
հրապարակին վրայ մեծ գործ ընող վաճա-
ռականի մը քով grand livre (որ թարգմանի
մեծ գիրք)ը բռնելու պաշտօնին կոչուիմ
0100 դրուշ ամսաթուակով, ու ապա տիմ այլ
եւս ժամուն մեծ գիրքը այսինքն Յասմա-
ւուրքը բռնելէ:

Հաշուեցուցակ չըլազայեալ պնակաց, ի տօնի կանանց . . . եկեղեցւոյ . . . թաղի.

Թիւ պնակաց

7 գանձանակ չըլազայեալ ի քահանայից

00 Գոյացեալ գումար

(իրենք կը բանան իրենք կը գոցեն
ու մէջինը մինակ իրենք գիտեն)

7 պնակ կամ թապախ չըլազայեալ ի քահ.

00 (անտեսանելի յաշխարհականաց)

1 » » » ի Տիկին. . . է, վասն . . . 12, 25

1 » » » » » » 11, 50

1 » » » » » » 8, 75

1 » » » » » » 14, 25

1 » » » » » » 13, 50

1 » » » » » » 10, 25

1 » » » » ի Մեծապատիւ » 13,

1 » » » » » » 9, 25

1 » » » » » » 7, 50

1 » » » » աշխատաւոր լուսարարին 4, 25

1 » » » » աշխատաշատ չապկապահին 3, 75

1 » » » » միքրոպաշատ ժամակոչին 5, 25

26

Ընդ ամէնը ճէման եւօքիւն 113, 50

Այս ցանկէն դուրս են նաեւ, մասնաւոր
ծանուցմամբ աղքատի պնակը, ներսի դրան
առջեւ կեցած պնակները, դրսի դրան առջեւ
կեցած գանձանակները, քառասնից պնակը
ու անոր դիմացը չարուած աղքատները, ո-
րոնցմէ դուրս ելած միջոցիդ օձիքդ ազա-
տելու համար կամ մէկ մէկ տասնոց տալու
ես կամ երեսդ պինդցնելու ես:

Թէ ո՞չ, որոնք են այս 113, 50
դրշ.ի պատկառելի գումարին գոյացման մե-
ծագոյն սատարները:

Անոնք՝ որոնք թաղականի կին կամ ազ-
գականներ են, անոնք՝ որոնք պնակ պտտը-
նողներուն ազգականները ու ծանօթներն են,
անոնք՝ որոնք երբ դրամ չը ձգեն պնակը,
քովերին կեցողներէն ամչնալու զգացումը
ունին, եւ անոնք՝ որոնք արդէն ժամուն
համար պատրաստած 3 շրշ 10 փրյ. պիւտ-
ճէ մը ունին, որուն մէկ բոլորը արդէն ժամ-
կոչ եղբոր բերած միւսերին կը վճարեն, ու
աւելցած 2 շրշ 10 փրն. 26 պնակին իջարե
ընելու անձկութեան մէջ կը գտնուին, իսկ

մնացեալները կամ վերացեալ կազմութեան կամ միշտ շանժե բլաս կընեն պնակներուն չի հանդիպելու համար, եւ կամ առջեւի կարգը սրիւր սրիւր թառամախըխին կը փակչին:

Պէտք է գիտնալ նաեւ թէ այսքան պլանակները պտտցնելու համար թաղակտն ալ պէտք է, որ անշուշտ դժուար ըլլալով զըտնել, շատ անգամ պնակները կը տրուին այն պիսի հաւու ածածներու ձեռք՝ որոնց մասին առայժմ խօսիլ չեմ ուզեր, որ մի գուցէ դիւրազգած բացառութիւնները վրանին առնելով վշտանան, ու հասցէիս ուղղեն խել մը ինձ չը յարմարելիք՝ վրաս պարի խօսքեր, որոնք կը մնան իբր խօսք իրենց ու անլիւի մեղաւորէս: Հաւատացէք որ երբ կեանքիս մէջ չարաթ մը թաղական ըլլամ, ամբողջ ժամուն պնակները կը ժողվեմ կը տանիմ Ուզուն-չարչի տէօքմէճի ուստա Սիմօնին ու շամտան չինել կուտամ:

Այլ սակայն, վերջին պահուն ուրախութեամբ կիմանանք թէ՛ ... թաղին Պատ. Հոգատար մարմինը, որոշած է այս մասին վերջնական դարման մը տանիլ, դադարեցնելով պնակներու չրջագայութիւնը, որու փոխարէն ստանալով թաղեցիներէն փոխան պնակին՝ պնականութիւնը եւ կամ ... (դեռ անունը չէ դրուած որ ըսեմ) ինչպէս ըրած են մէկ քանի թաղեր:

Բայց եւ այնպէս նկատողութեան արժանի կէտն այն է թէ թաղերն առաւել կամ նուազ նիւթական տեսակէտով իրարմէ կը բաժնուին, հետեւաբար չեմ կարծեր որ մի եւ նոյն որոշումը ամէն թաղի ալ յարմար ըլլայ, եւ որու հետեւանքով թերեւս աւելի նուազի եկեղեցական հասոյթը, ու բրինձի գացած ատեննիս նոյն իսկ պոչկուրէն ալ ըլլանք, մանաւանդ քանի որ պարտաճանաչութիւնը շատ անգամ խաթեր համար բան մըն է որ կը կատարուի, մեղաւոր ծառաս միշտ նախամեծար կը համարի հեղինակութիւնը հետեւողութենէն, ու երբէք չախորժիր նմանողութենէն, այս մասին իբր հեղինակ պարապ խօսքերու, իմ ունեցած ամենաբարձր սաղանդովս ամենացած կարծիքս այն է թէ, պնակներու խնդիրը այն ատեն վերջ կը գտնէ, երբ սովորութիւն ըլլայ «վասն ամենայն ինչի», միայն եւ մի մի-

այն Մէկ պնակ պտտցնել եկեղեցւոյ մէջ մէկ անգամ «օրհնութեան», ժամանակ ու մէկ անգամ ալ «Ս. Պատարագի», մէկ յարմար միջոցին, ու այն ատեն ամէնէն յետին աղքատն ալ կը փութայ մէկ անգամուան համար տասնոց մը ձգել, ու կզգայ իր պարտքը կատարողի անհուն գոհունակութիւնը, ինչո՞ւ զրկուի աղքատը իր տասնոցը ձգելէ, քանի որ ապահովաբար անկէ ունէ դրամ չը պիտի ուզուի փոխան պնակի, բարեկեցիկները թող 26 պնակներուն մէկտեղ ձգեն, եւ կը հաւատամ թէ՛ չը պիտի գըտնուի մէկը որ անպատճառ տասնոց մը չը ձգէ, թող քարոզիչները ծանուցանեն ժողովրդեան, թող փորձուի անգամ մը, ու արդիւնքը անպատճառ պիտի հաստատէ գործը, ի մեծ ուրախութիւն բարեպաշտից, որով թաղ. Խորհուրդներն ալ կազատին ահագին գործողութենէ մը, ու միայն իւզագին դիմումներուն հոգ կը տանին:

ԵՐՄՈԳ

ԹԵՓԵԼԻԹՄԻՔ ՀԱՏԱԾ

(Անուակիսակ դագեքային մենծ եագրճի աղային թիֆլիսեան վրայ կըրուած)

Քա օրդի, կըրէ կ'ըսես կ'երթաս, հիչ չես հարցունք քիմ, աճապա մերին սա քաւսիանսճի Թուրքանսան ի՞նչ ճուրերու վրայ է տէյիմ:

Քա զաւակըս, քանի օր է տա եռումուրճախ եկէրըս իս պոնած է, հէլէ խալչաս ըսես նէ՛ աման Ասվածամար, հէռու վրայէդ, սէտիրին քէօլէյէն չեմ կրնար կոր չարժաքիլ, ամմա ինչ ըլլայ, կըրեմ պիսոր, գէրէմ մեռելնոցին օրը կէրէկմանլըխը կ'ըած մասխառայութիւնները իս ճինի ծինի վրայ նստեցուցին:

Հէլէ Օքսէնըս ալ, առատա պիր պանկ կըրող ըլլալուն կիւճպէլա պնտեղէն ճօճուխին սնտուկէն տա մէկ թառաֆը կրվող տուղթերէն ձեռք անցուցի:

Հիմաճուկ էս նախը ընեմ տէ դուն ալ սէյիլը ըրէ:

Սուրբ Զատիկին էրկուշարթի օրն էր, նայեցայ քիմ հավան խըյախ, միսաֆիր կալու վախիթն ալ չէ, էլլէմ տա կէրէզմաննոցի ժամը էրթամ տէ մոմ մը վառեմ ըսի:

Քա տղաս, ան ինչ խալապալը՛խ, ան ինչ խալապալը՛խ, նէ միւմբիւն ժամուն տուռնէն ներս մանալ, կը ձգեն կոր քիմ, սիրի սէրէթ թէկ պըյըխ սըյըլն ճահիլներ, տըռանը առջին տիբիւրի էդեր կեցէր էն նէ:

Նայեցայ քիմ տապախ պտտցունող օն իթիւր աղաները ճանալար կ'ըսեն առաջ կ'երթան կոր, էս ալ ճանապար ըսի ամմա փարա չըրաւ:

Չերկնցունեմ եազըճի աղաս, մոմին փարայով սիմիթ մը առի, սանկ կէրէզմաննոց պոյլանմիշ էղայ:

Քա զրուցելը ինծի պէս նամուսլու կընկան մը համար ամօթ է ամմա, մահսուստանա զրուցեմ պիտոր քիմ, կալիք մեռննոցին ըռլանմիշ ըլլան էտէպիւրները:

Քա Մարիգան ալ հոն չըլլայ մի կիտե՞ս վոր Մարիճան, ճանչնաս պիտոր, հանի սա սուլու Սրթին կըսէին կայ եա, անոր կնկանը ախպորը աղջիկանը էրկանը թէյզէին մենծ քուրը առած է նէ, ճանչցա՞ր, իշտէ անոր սալարպաշ Մարիճան քիմ, առաջները խույումճի Ովրէստէս աղային համար խոսվեր կոր ամմա, հիմաճուկ կիտնալըս էտ է էդեր տէ, իննսուն օսկի թրախօմա իլէն մօրը տուռնէն էրկու տիրէկով Սաղմիկ տուտուին տըղին ախթէր թօփալ Մէրկէրին պիտոր չինեն էդեր: Ինչո՞ւս պէտքը, պէրանս պիլէ չեմ պանար տէ զրուցեր քիմ, աստեղը սիրող մը ունի տէ էրկու հեղ ինծի էկաւ տէ քասիանս պանալ տուաւ տէյիմ:

Չե՞ն ալ մըսիր աճապա՞ տա շուները: Ալ պէնի սօյէն պուլեցներ հագած, Փարաշ կըլխարկները կըլտնին անցուցած, տիպէրնին ալ քէօլէ սիւփիւրկէսի Ֆըստան մը անցուցած, անանկ մը կը քալեն կոր քի, գիմացի սըրայէն էկող չալը չըռփը մագերով, կիտէր կէլիւ եախալը ճէպի տէլիկ տէլիխանըները խառըլըմիշ կ'ընեն կոր:

Մեր վախթին, լուսահոգի էրիկըս, իս տեսնալու էկաւ նէ, եէլքէնին իրկուներ, լա-

չախով դէմը նստայ, կընիկը ըլլալով մէկտեղ:

Հիմաճուկուանները, աշվընին կէօպէկը խաղայ հէմէն, ճանապարհին մի կ'ըսե՞ս, պոյայի քիւրը էրէսնուն կըսել մի կ'ըսե՞ս, բիւթիւնն ալ կոց կիտեն կոր վըռտկածները: Աճապա կ'ըսեմ կոր, տպրո՞ցը կը սորվեցընէ կոր աս օլմայաճախներուն, աս խըտար կոտորտըլուք:

Քա օն իթիւր աղաներն ալ հոն էին տէ պէրաննին պանալով պան մը չեն զրուցեր կոր քիմ աղջիկըս ամօթ է, նամուսուլու զուրթին է տէյի, օվ կիտէ, հէլպէթտէ առնոք ալ իրենց հիսապը ունին, փարա չե՞ն ձգեր տէյիմ կը վախնան կոր, ինչ է, ալլահալէմ անանկ է, զիրա զրուցելիք պան է չիտակը:

Յրէնկի աղջիկները ի՞նչ կը զրուցեն տեսնեն նէ, ձըգէ քիմ անոնք ալ կընեն կոր եա, ինչ է նէ, կոցենք ան տեղուանքը:

Մէյ մըն ալ նայիս Սուրբազանը փէք ծանր հագված օգէվոր տիրոջ էկաւ, քալըկըղածները, աղջիկ իլէն մանչ օլաճախները չը ձգեցին քիմ աղւոր մը սէյիւր ընէի, բիւթինը մէկէն օգէվորին վրայ եըղըլմիշ էղան, մինակ էփիսքոպոսին ճաթալըազը կըրցայ սէյիւր ընել, վէլհասըլ հայր մեր մը պիլէ չը կրնալով զրուցել թէփէ կէրի տուն տառցայ ճուրերու մէջ, անկէ եէլէրըս տաւ հա ալմիշ ըրին:

Քա օրթիս, վորչափ ըլլայ նէ, առն կըրող կարգացող էս, անոնց կրարաւճայ հասկըցուր քիմ, աս ըրածներն մէթին պան մը չէ տէյիմ:

Մենք կընիկ խըսմիս վորչափ խօսինք պօլ է, ձեր ըսածը պաշխա տիրլիւ կըլլայ:

Ան ալ ըսեմ քիմ, տա Թալիթա էր կալէթա էր ինչ էր նէ, անոր տունը կիտես նէ նախ ըրէ քիմ, էրթամ մէյմը տեսնամ տա կընիկը, պէլքիմ տէ կնիկը ինգլաթի օրը էկած էր ամմա, ատ անս պապա կիւնիւին վո՞ւր իրար պիտոր կըտնայինք քիմ:

Խէր է քա եաժրուս, աս ըսածըս մութլախա ըրէ, ստիպալական է, գէրէմ Օգսէնա կընիկ կ'ըսէ կոր տէ կըլխըս կուտէ կոր, զավալըն ինչ ալ ընէ, հախ ունի մահսըմըս:

ԲՆՍԻԱՆՍՃԻ ԹՈՒՐՖԱՆՏԱ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Համեստափայլ զազէթածի

Շիրին աղբարիկս,

Քա ճանճմ օրդի, անցած շաբթու մա-
լէրս մէլաներս նախը ըրած վախթոս, եռու-
մուրճախ աղջիկս շաբուխ կըրէ տէյի խէլքս
կըրխէս առաւ, շատ մը պանէրըս մոռցայ
կըրելու:

Երէք հատ ճէպէ, մէկը 4 խատէխնոց,
մէկը երկու խատէխնոց, մէկն ալ թէք, հինգ
ֆինճան ունիմ, 10 հատ ալ խուրճէրը կոտ-
րած ունիմ:

Եա սունտուկիս պէրանը պանալու ըլլամ,
տեսնաս նէ կայ եա հէրեան կըլլաս, քա
եա վրում, բէկ խաթունիկ կընիկ եմ, ան
բիւթիւն Աստուած ողորմի հոգուն պարոն-
տատիս անմէն մէկ պանէրը սըխը սըխը
պահէր եմ:

Ան աճէմ կէօմէին, սալթան, կլխուն
չաթման, երէք հատ ծուններու պէս ճէպ
ճերմակ թակկէները, կէճէլիկ խաուխը,
թէնպէքիին շալ քէսէն, չուխայ շալվարը,
անոր տակի ամէրիքան բաշանէրը, ճերմակ
խայթանը տիգլիկը, օտքին նալչալը խաթ-
րը, ասոնց անմէնքն ալ իրէն պաղլչամիչ
պիտի ընեմ, թող աղւոր աղւոր հաքվի սըք-
վի տէ իրեն չհաւնող բանծուհիներուն թող
ճախայ ընէ, ճիւղանի պէս փեսացուս:

Քա սուռաթներդ կռծեմ անուշիկ աղբա-
րիկս, եա իմին պահած պաներս տեսնաս
նէ՛ կայ եա, բիւթիւն պերնիդ ճուրբը պի-
տի վազէ:

Իրէկ խայթանէ խարճը չուխայ էնթա-
րիս կը հազնէի տէ մէկ հատ ֆօթօզ մը կը
կապէի քի, ան խուսաբուի պալըխնները,
պախալները, խառապները, զարգաժատճի-
ները հէրեան ըլլալով վանկըր զնկուր կը դո-
ղաին: Քա եա վրում, շատ պանէր քաշեցի
տէ, տէրիս իլէն օսկօռս մնաց: Ան առջի
աղուորութիւնս չի մնաց ամմայ, իքվիիս օր-
թայի թէք ղուրուշի խըտար պէնկս տեղն է,
մէկ մալ կէռտանիս վրայ ունիմ:

Ասկէց սօղրա մանակիս հետը մէյ մէկ
հօտած ալ պիտի կրեմ:

Քա ճանճմ օրդտի, լուսահոգի կնկահորս

աղջիկանը թօռանը բէսին օրդախին դրա-
ցինը շուան Վարդէնի կըսեն, շատ մուհա-
պէտի ենք իրարու հետ, տուր պացեֆին
իրիկունը ժամէն էլլալնիքէն սանկ քիչ մը
օղրամիչ ըրի, քա զաւալը կնիկը տօղէրու
մէջ նստէր էր կուլար կոր, քա քուրուկ,
խիւր ըլլայ ըսելուս չի մնաց պէրանը պացաւ
նախլց:

Ձի հասնին չի կատարին ըլլալու, սա
ակնցի թապլաքեար վարժապետին թողը
թաղական է կղէր, իրեն գիրքերը տրպա-
տունը կը քէէ կոր էղէր, Վարդէնիին թողն
ալ ան տրպատունը կերթայ էղէր, չօճօխը
գիրքի փարայ ուզեր է, մարն ալ չունիմ ը-
սեր է, չօճօխն ալ եալվար եախարով լացեր
է, մամն ալ չօճօխին ֆիրեազին չի դիմա-
նալով՝ չամաշիրին խազանը թէֆէճի Պըռ-
լանդիին քովը ընէհին տըրէր տասը ղու-
րուշ է արէր, օրը տասը փարայ ֆաիզով,
բէսայէն կողտուկ:

Հիմայ փարայ չունին քի խազանը ընէ-
հինէն հանեն, եանի եա բէսանին իմանայ
նէ կայ եա, տունին մէջը փաթըռտը պիտի
կոխէ:

Քա ճանճմ զազէթածի աղբարիկս, առաջ
աս ժամը շնորքով զէնկին թաղականէր
կային, շնորքով տէրտէրնէր կային, ասոնց
ամէնքն ալ ծիր ո՞ճ ծան էղան, անոնց տէղը
խօսքը անցնող տէրտէր մը եկաւ ամմայ, ան
զաւալըն ալ էխաիեարցէր է արթըլս:

Քա եայ ան էլող լուսարարին խեղճու-
թիւնը, կիտէս անուշիկ աղբարիկս, խապա-
հաթը ինչ է էղէր, ժամը բսակ մը էղէր է
տէ հարսին բէսին տակը խալի է լուէր թա-
ղականին չի հարցունելով:

Մէկ խապահաթն ալ չիտակ զուրցէլն է
էղէր. նոր թաղական էղած ատէնին լու-
սարարին հարցուցէր էն քի նէճի էն տէյի,
աս ալ չիտկէ չիտակ ըսէր է, մէկը խուն-
տուրածի մէկը քիթապճի, մէկն ալ հիճճի,
ասօր համար հանէր էն, հիմայ ալ այլանէրը
ճիէր թալապի պէս կտոր կտոր կուտան
կոր, նոր կարքըռող մարդ, ասանկ օրերով
պօշ պարապ կը պըտըտի կոր:

Օխ ըլլայ, սիրտս թախտաքօշ պացվեցաւ,
տնալէն տըղայ, ինչո՞ւ չիտակը կը զրուցէս
կոր, իմին տղաս մաղտանոս թէրէօդ թազէ

սողան թուրպ կը ծախէր մահալէնէրը,
կարքելու էլայ նէ աղջիկ տեսի կացինէ վար-
գաժատնիի վանճառնական է կըսէի, վայ
կլխո՛ւտ, դուն ալ խունտուրածիի բիթապ-
ճիի հիճճիի վանճառնական է չըսէիր, դուն
չիյտէս քի շիտակ զուրդողին թէրէն ծակ
կըլլայ, կընայ քաշէ քի հասկընաս:

Հագեքաներուն մեջը կըրող
ԹԱԼԻԹԱ



ՁՈՒԱՐՃԱԼԻՔ

— Ծօ՛, նորէ՛ն գաւաթ կոտրեցիր.

— Այո, տիկին, բայց այս անգամ բաղ-
դաւոր եմ, որովհետեւ գաւաթը երկու կը-
տոր եղաւ.

— Ծօ՛, ատոր բաղդաւորութիւնը ո՛ւր է.

— Ահ, չէք գիտեր տիկին, թէ որքան
դժուար է հազար կտոր եղած գաւաթ մը
գետնէն ժողվել:

* * *

Աշխարհիս վրայ ո՛վ եղած է որ ամուս-
նանալէ ետք ամէնէն երջանիկ եւ անդորր
կեանք վարող կինը:

— Եւան, որ կեսուր չունէր:

* * *

Մուրացիկ մը նպաստի մը գիմելով.

— Տէր իմ, ինծի փոքր բան մը նուիրե-
ցէք.

— Ինծի չվայելի փոքր բան նուիրել.

— Ուրեմն մեծ բան մը նուիրեցէք.

— Ան ալ քեզ չվայելի:

* * *

— Սիրելի Ամբակումս, այսօր մեր ւո-
մանութեան տարեգարձն է, գիտե՞ս:

— Այո գիտեմ, նաեւ աս յիմարաց:

— Ո՛ւր գրուած է ատանկ բան դուն
ալ, ապացոյց ունի՞ս:

— Այո, մեր ամուսնութիւնը:

* * *

— Ծանրմ էլմօնիկ հանրմ, Ֆիստան պի-
տի չինեմ ամա աճապա մօտան ի՞նչ է:

— Քա էլիր աս կիրակի եկեղեցի գնա,
հոն կը տեսնաս:

ՀԻՆ ԷՋԵՐ

Տաղս խաղալիք է ի ջախու:



Սիրքս ի փորիկս դողայր վախուս,
Ձեռուիս ի բան չերթար յահուս,
Ես ի՞նչ ճըվապ սի սաւ պապուս,
Որ կորուսեր եւ գիւ ջախուս:

Խիս գօրաւոր եր ու ձայնեղ,
Մեծ մեծ խիյար կտեր մեկ հեղ
Ոչ կու քննի(1) ի յայոց գեղ
Եւ ոչ կու հանի ծոցուս ի սեղ:

Չախուս ունէր աղեկ յասապ(2)
Հէս ինձ կեանս գօրն առանց կապ.
Գիւնով առին տոին ինձ խաբ(3)
Լուկ(4) ձրգեցին զջախուս ի յախ:

Չախուս կուսար ինձի խրաւս
Թե չոր հացեկ կացիր ի զաւս,
Գիտեմ որ խր չինէր ախաւս,
Հաւ անմուննաղ քառնան վրադ:

Կակուղ շաշիր(5) չինի, սաք հաց,
Ուրախացիր գերեսդ քաց,
Խրաւս քառոց տուր սանկիկնաց
Եղով ճըմունեկ(6) զինք հէս իրաց:

Չէս(7) որ երթանք հարկ(8) ու մեճիս,
Չախուս ասէր զաղտուկ դէպ յիս,
Աղեկ պասառ որ նըկասիս,
Առանց ինծի ձեռք չը սանիս:

Խիս ասապով(9) սաշեր չոր միս,
Քաշալերէր յորդորէր զիս,
Չգաւաքըն չի՛ց, տուր ի յախիս,
Ուտեմք խմեմք. հանգչի հոգիս:

Խեղճըս կուգայ ախոյ չունիս,
Անեպ մըսի որ հանդիպիս,
Ազահուրթեմք կուր չը սանիս,
Փակչի պողազդ, չինիս ճառիս(10):

Քան զվարդապէս եր իմ ջախուս,
Չօրն քառոց սայր ծըխներուս,

Երբ սփռնեմք գայ սօներուս,
Տապկած ձրկնիկ քերեք սիրուս:

Երգս է զքրած Մարտիրոսի,
Չախուս խաղըի (11) եր չոր մըսի,
Հարսնիք սարան ի նոր փեսի
Խեր չը տեսայ քան կորուսի:

Չախուս տսեր, խիստ մի հոգար,
Ուրախացիր երբոր զքսար,
Մինչ ի յուշիս ունիս դիմար (12)
Որ կեցընեմ մեղրով խիլար:

Ոչխարի միս չիներ փուղսայ (13)
Ջրնիք սաք դեղով (14) ծեծած քուփսայ (15),
Նիստ ի յեջերն յորդորեք զնա,
Տո՛ւր գաւաթիկ մ'աչ ի վերայ:

Ի յընթեռնուշըն Սաղմոսիս
Տամ սքողիկն շատ ողորմիս,
Երկու օրիկ որ քարկեց (16) զիս,
Յակոբաս չընկաւ ճնճողուկի միս:

Յաշխարհ չըկայ այլ խեղճ քան զիս,
Հաւաս (17) կայայ անգեռ քանիս,
Ծիծղան (18) մարդիկ նախասեւ զիս,
Երբոր ասեւ ի մեջ հարկիս:

ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱՐԱՀԻՍԱՐՑԻ

Բառարան ծանօթ. — 1 Կը գնայ, կ'երթայ. — 2 Էտեպ (թուրք.) կրթեալ. — 3 Խապ (թուրք.) քուն. — 4 Լոկ. — 5 Տեսակ մը լաւաշ (փիսեք). — 6 Խմորեւ, շաղուեւ (եօղորմագ). — 7 Ջատ, առանձին. — 8 Հարսնիք. — 9 Տե՛ս յատապ. — 10 Խայտառակ ըլլալ. — 11 Դգալ. — 12 Դժուարութիւն. — 13 Թերեւս պուղուտայ (թուրք.), այսինքն շոգիի մէջ եփած. — 14 Պղպեղ. — 15 Քոփսեք, կլորիկ. — 16 Թերկ ընեւ, լքեւ. — 17 Փափաքիւ. — 18 Ծիծաղող, ծաղրածու:

Ծանօթութիւններ. — Ահաւասիկ ուրիշ ոտանաւոր մըն ալ, մեր նախորդ թիւով հրատարակած ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱՐԱՀԻՍԱՐՑԻ ծիէն:

Կոստանեան իր հաւաքածոյին մէջ Մարտիրոս ստորագրութեամբ քանի մը տաղեր

հրատարակած է, որոնք նոյն այս Մարտիրոսին գրչին արտագրութիւններն են:

Մարտիրոս Խարահիսարցին իսկապէս 16րդ դարու բանաստեղծ մըն է, եւ միջնադարեան բանաստեղծներու մէջ նշանաւոր է իրաւամբ:

Լեզուն բաւական կոկուած ուսմանէն մըն է:

Գերաշնորհ նորապսակ Շահէ վարդապետ, ինչպէս ինք անձամբ դիտել տուաւ մեզ, համաքաղաքացի ըլլալով յիշեալ Մարտիրոսին հետ, անոր բոլոր տաղերը ժողոված եւ ուսումնասիրած է եղեր:

Փափաքելի էր որ բանասիրական տեսակէտէն այս կարեւոր գործը մօտ ատենէն լոյս տեսնէր, եւ կարգ մը հետաքրքրաշարժ տեղեկութիւններ ալ այս առթիւ երեւան գային:

Բերա

ԳՐ. ՀԱՄԱԿԵԱՆ

ԹՐԹՈՒՄՆԵՐ

ԿԵԱՆՔԸ

Շիրիմի մը տակ ճերմակ
Հողին մըրին ծոցին մեջ,
Սիրելի մը գլխահակ
Ննջեք քունով մը մ'անապակ:

Հովը՝ հառա՛յ սգաւոր
Թափառայած կը սահի
Նոճիկն քով սեւասուեր
Գիշերին մեջ ամայի:

Հող վերմակին տակ ցրտին
Ննջող հակն ալ, գուցե՛
Խոկայ քե կեանքը մարդուն
Անիրական երա՛գ մ'է:

ԱԼԻՍ ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԹՕԺ-ԳԱՐՈՒ. — Ինքզինքը գալֆա քշող միւսիւ մը, չենք գիտեր ո՞ւր կէ չիւանդանոցի տոմսակ մը ձեռք ձգելով՝ առտու իրիկուն «կնիկս թեւս առնելով պիտի երթամ» կ'ըսէ կոր:

Ծ. Խ. — Երթայ բարով, միայն թէ թեւը կնիկ ունեցողը ներս չպիտի առնուի եղբր, նոյնպէս կնիք՝ չունեցող տոմսակիրները: Ուստի կը յանձնարարենք յիշեալին՝ կնիկը չըխընքնել և անանկ տանիլ:

ՕՐԹԱԳԻՒՂ. — Զիւնածաղիկ տիկնոջ մը տուժալի թէնճիրէ, ին տակը եղը՝ և վարի յարկի փէնճիրէ, ին տակը չիք միւսիւ մըն է առեր:

Ծ. Խ. — Թող եղոտ թէնճիրէն բէնճիրէն հսկողին գլխուն անցընէ, որով երկուքն ալ աղէկ մը կը մաքրուին:

ՍԿԻՏԱՐ-ԻՃԱՏԻՅԷ. — Պարոն Աշոտի բըթիք Սթրանսիս կոչուած զբօսարանը, տեղւոյն պատուարժան երիտասարդութեան կողմէ տեսած քաջալերութենէն խրախուսեալ, այս անգամ ամրան եղանակին պատճառաւ թէ պարտէզին և թէ զբօսարանին աւելի փայլ մը տալու մեծ հոգ կը տանի:

Ծ. Խ. — Բարի յաջողութիւն, միայն թէ այդ ծառերու շուքին տակ հին տուքօսները միտքը գալով՝ նորէն դերասանութեան ձեռք չվարնէ:

ՂԱԼԱԹԻԱ. — Եռաձայնին օրը շատ մը օրիորդներ և միւսիւններ կարծելով թէ՝ Հիւանդանոցի նուագահանդէսին օրն է, «առ իս» քօստիւմով եկեր և քրտինքէն թաց խխում դարձեր են:

Ծ. Խ. — Թող մէյմէկ տաք ըխլամուր խմեն, որպէս զի սաթիճան չըլ-

լալով՝ առաջուան պէս բաթիճան մընան:

ԴԱՆՏԻԼԼԻ. — Որոշուեցաւ որ ասկէ 15 տարի առաջուան լուսարարին 60 ոսկի առնելիքին հաշիւը քննելու համար ժողով գումարէ թագ. Խորհուրդը:

Ծ. Խ. — Թող աճապարեն, որովհետեւ խեղճ մարդը տուն չինելու ձեռնարկած է:

ՍԿԻՏԱՐ-ՍԷԼԱՄՍԸԶ. — Ասկէ առաջ ծաղիկ հանող բիքէ եէլէքով միւսիւ ոմն Միքէ մը, մօրուքը ձեռք տուեր է օրիորդի մը:

Ծ. Խ. — Թող քսակը ամուր բըռնէ, ձգէ որ մէջը բան չկայ ետ:

ՏԵՂԸ ԱՆԾԱՆՕԹ. — Միւսիւ խառնալ, գիշերները զբաղած է թարգմանելու հետս մ'ալ:

Ծ. Խ. — Թող գօտիքնի դեղահատ կուլ տայ իրիկուան ճաշերէ ետք, մեծ քանակութեամբ:

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Հոռոկի տուն նշանուեցաւ, հովոտ գիշեր մը կը փնտռէ կոր որ առագաստը բանալով քէֆալի որսորդութեան ելլէ:

Ծ. Խ. — Աղջիկն ալ մէկտեղ առնէ, մեղք է քուրիկը:

ԲԵՐԱ. — Մեծ հոգի բանաստեղծ մը գիշերը «հով, հով» երազած ատենը փողոցը, ոտքէն խածատուեցաւ:

Ծ. Խ. — Կատաղաբուժական հաստատութիւնը տարէք ճօճուխը, մեռնի նէ մեծ կորուստ մը կը կրէ գրականութիւնը:

ՕՔ ՆԱՔ

ԼՈՐՔ ՆԱՔ

ՈՏԱՆԱԲՈՐ

Զարթուս ՄԱՆՉՈՒՄԷ բերքը սիրուած յոյժ
Ստացած նոր փայլ, նոր կորով եւ ոյժ,
Իր խմբագրական տարին վեցերորդ
Թելակոխեց ան շոկ անդորդ:
Այս առթիւ կ'արժէ ըսել ճշմարիտ
Թէ արժանատի Տիար Յ. Ֆերիս,
Ժողովուրդին մէջ, իբրեւ մեկ հոսանք,
Հայրայթեց անոր դաս եւ գրասեղ:
Թէ իրեն եւ թէ խմբագիրներուն
Մտղթենի բոլորել շրջաններ քեղուն:

X

Ո՛վ դու Չղատեան պատուական հայր մեր
Անունըդ մեր մէջ պիտ ըլլայ անմեռ,
Ինչե՛ր ալ ըսին վարիդ անբասիր,
Բայց Քրիստոսին պէս դուն բան մը չըսիր:
Վերջերս ալ եղեր յօրինէր համակ
Կուզեն վեհ ճակիդ քեզ մուր համակ:
Կիկնդ ու զուակդ առաւ Աստուած
Բայց միտքարուեցար արժով վշտացած,
Այսպէս ալ հիմա սիրոյ քոնէ ամուր
Վերջ պիտի գնեն ասոնք միահամուռ,
Երբ ֆինուրիսն մը ըլլայ անաչառ
Պիտի պապանծին լեզուներ գեշ, չար:
Ուսի աղօթքով ասոր ըսպասէ
Որ ալ դադարի այն որ բամբասէ:

X

Թարգմանութենէն ետք եղբարց կոկորու:
Որ փրանտերենի եղաւ մեկ concours,
Սաճ Թրանսլիտիոյ աղէտն է նորոյթ
Որ շատեր քողոց անօթի, անմոյթ:

X

Արեւիկոկոյոս Չանչեան Տ. Բարթոլ
Տառապեղէ ետք ախտով մահ առքոյ,
Անցած Ուրբաթ օր դէպի ցորեկին
Աստուծոյ ձեռքը աւանդեց հոգին:
Հովիւ Տեղապահ եղած էր բարի
Ապրեցաւ վարսունը ուրբ տարի:
Օծուելը ըրաւ Ս. Պատրիարք Հայր,
Բաղնակ ներկայ էր բազմութիւն մ'անծայր:

X

Պօղոս Նուպարը մեր Փաշան ազնիւ
Գանիրէի մէջ մօր մահուան առթիւ,
Հինգ հարիւր ոսկի մեկեկն է տուեր,
Քաղթին խեղճերուն համար իբր նուեր:

X

Այս Հինգշաբթի օր ի Հալափա,
Պատրիարք Հայր Ս. Մաղափա,
Մեծ հանդիսաւոր մասոյց պատարագ:
Երգեցողութիւնն այնքան ներդաշնակ
Եռաձայն եղաւ, մեկեկ էր դաշնակ:
Սակայն ասոնց ինչ վեհ շնորհալի
Շշուկ, վժշուկն էր անսանձի,
Այնքան խօսութեամբ եւ իրար անցում,
Կարծես խօսելու հոն կար մեծ մրցում:
Կը խոստովանեմք ցաւով արդարեւ
Թէ տաճարի մէջ լուսինք պատշաճ ձեւ:

X

Սարկաւագ վարդապետներ Արեւաշէն
Որոնք նոր եղած դէռ շատ անփորձ են,
Մօտ օրէն կ'անցնին պաշտօնի գլուխ
Աշխատի, գործել ջանքով արտաբող:
Յուսանք որ կ'ըլլան խոհուն առաջնորդ
Չապրելով անշուտ անգործ, որպէս յորս:

X

Հիւանդանոցի բօստեան այս տարի,
Վաղը կիրակի պիտի կատարի,
Այս գարնանային օդով գեղեցիկ
Բըթի Եան բասրոն: Խումբեր երգեցիկ
Պատրաստուած են ճոխել այս հանդէս,
Ուսի հանդիմով կ'աւանդեն այսպէս,
Թէ օրհորդները սիրուն, Մոչտովափ
Եւ Օղիա Քոհան պիտ անեն նուագ:
Ածող, երգեցիկ խումբերը ահա՛
Կը վարեն եղեր Տիարք Մանաս, Նալմա:
Անշուտ բարեւոր գրոտ մեր դասուն
Ներկայացուցիչները փափկասուն,
Կը փութան երթալ ցաւով մեկ ոսկի,
Չքոնուելով հոն բամբասանք խօսի:

Արժանատի ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆ ԱՆ

ՏՊԱԳՐՈՅԹԻՆ Ե. ԱՍՏՈՒՐԵԱՆ

Պատը այլ ճատտեւի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ԱՆՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱԹՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ սննդային մասերն եղան մօին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոյիս նոր բերուած այս սննդական կազդուորիչ դեղը, գնահատուած համաբաւոր բժշկներէն. յերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'ըգան «ուժասպառութիւն, դալկութիւն, պնխորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջգային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղօրէից միջերանոցներու քով:

50—39

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՊԵՐՁԵՂԻՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոյիս, Սոչքասն Համալ, Թօփաղեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տոկունութեամբ և գիներու անփոփոխութեամբ շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուստներու, կանանց քիչքոններու և տղայոց շիք և դիմացկուն փոքրանքներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ ջերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—33

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ վնասա-

կար նիւթերէ բոլորովին զերծ է:

Յիշեալ ջուրը մաշեցնող գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք ե-



ղած հրահանգները տրուած են, ասկէ զատ ձերիտէի Վեդաիի Թըպպիյէի միջոցաւ մասնաւոր աղբարարութիւններ եղած են:

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապառուջ լիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ապրանք կը ծախեն:

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մաշեցնող, զգուշացէք այս կարգի աղտոտ ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուրը ու զուտը ստանալու համար դիմեցէք Մահմուտ բաշա ճատտէսի, յիշեալ Արամ Էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուանատունէն վաճառատունը, ուր պիտի գտնէք մաքուր ջուր ձեր մաշեցնող գունաւորման համար:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուղեղ-լուծիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեամբ:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, զետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիտիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիններու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա.ՊԱՌԻԿԻ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն զժուարհաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ

50-24

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ի

Ա Յ Ս Մ Ա Ս Ը

ՏՐԱՄԱԳԻՐԵԼԻ Է ԾԱՆՈՒՑՈՒՄԻ